ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ. norkharberd@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

« 10 » ապրիլի 2013 թվականի N 124

Բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ սեփականության իրավունքները ճանաչելու և հողամասի վրա առկա շենք, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքները վերականգնելու մասին

Հիմք ընդունելով Գաբրիել Երիցյանի դիմումը և Ջուլետա Երիցյանի համաձայնությունը, նկատի ունենալով, որ հողամասի տեղագրական հանույթից պարզված ընդհանուր 0.11687 հեկտար բնակելի կառուցապատման հողամասից 0.106 հեկտարը դիմողի սեփականությունն է, 0.01087 հեկտարը ավել օգտագործվողը, ինչպես նաև սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը չպահպանված շինությունները կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հաշվի առնելով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հողամասը բավարարում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1/,2/,3/ ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության« Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի N 753-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել 1961 թվականի օգոստոսի 29-ին ծնված Գաբրիել Հովհաննեսի Երիցյանի և 1958 թվականի մարտի 4-ին ծնված Զուլետա Հովհաննեսի Երիցյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքները Նոր Խարբերդ համայնքի 8-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող 0.11687 հեկտար բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ և վերականգնել սեփականության իրավունքները շենք, շինությունների նկատմամբ:

2. Շենք, շինությունների մակերեսները ենթակա են ճշտման «Էրգիր» բաց բաժնետիրական ընկերությունում:

3. Հողամասի սահմանները որոշվում են գլխավոր հատակագծով հաստատված իրադրական հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՍՊԱՐ ԿԱԿՈՅԱՆ

2013թ. հուլիսի 10

գ. Նոր Խարբերդ